

891.99

2-14

ԱՇԼՂ ՀԱԶԻՐԻ

I

ԳՈՂ ՀԱՐՈՒ

II

Տարօրինակ աղքատ.

Հ

ԹԻՖԼԻՍ

1907

(17)

ԵԼԵՔԾԱՑԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ

891. 99

2 - 14

891.99
2-14

6 NOV 2011

ԱՇԾՎ ՀԱԶԻՐԻ

I

ԳՈՂ ՀԱՐՈՒ

II

Տարօրինակ աղքատ.

ԹԻՖԼԻՍ

1907

(17)

ԵԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ

ԳՈՂ ՀԱՐՕՆ

3

Ա.

Լինում է չելինում մի մարդ՝ անունը
Հարօ, որը ոչ հայր է ունենում, ոչ մայր,
ոչ եղբայր և ոչ մի մօտիկ ազգական:
Հարօն դիտենում է տասնեւերկու արհեստ,
բայց տարաբախտաբար չի կարողանում ոչ
մէկից օգտուել, ամեն տարի ուրիշ ուրիշ ար-
հեստներով պարապելով, փորձումէ ամենն էլ,
բայց իզրուք: Վերջապէս երկար տանջուելուց
յետոյ Աստուծոյ հետ հետեւեալ պայմանն է
անում, զարնաճամտին տասնեւերկու լորի է
ցանում իր փոքրիկ պարտիզում և ամեն մի
լօրու մօտ մի փայտ է ցցում և վերան կպ-
ցնում մի կտոր թուղթ, որի վերայ զրած
է լինում թէ՝ այս ինչ արհեստն եմ ես և 'ի
միշի ալլօց մէկն էլ ցանում է գողութեան
համար: Վերջացնելուց յետոյ ասումէ «Տէր
Աստուած, այս է իմ բաղտս, սրանցից որը
չուտ բուսնի, այն էլ լինի ինձ վիճակուած,
այն արհեստով պէտքէ պարապեմ: Անցնում



3827-8

է մի քանի օր, գալիս է տեսնում, որ գողութեան լօբին արդէն զլուխը հանել է գետնից: Հարօն զղուանքով հողը վրան է ածում, ուաքով ամրացնում: Մի երկու օրից յետոյ զարձեալ գալիս է տեսնում, որ նա է գուրս եկել զարձեալ: Ճարանստեալ հնազանդում է իր վիճակին ասելով. Է՞ն ի՞նչ անեմ, զուցէ այս է զրել Աստուած իմ նակատին. զրանով պիտի հայ ուտեմ ես, եթէ ոչ ասանեերկու արհեստ զիտեմ, բայց բեզարեցի փորձերով, ի՞նչու չք կարողացալ ոչ մէկից օգուտ քաղել՝ հոգ չէ, մի՞թէ չի կարելի զողութիւնով բարի գործ կատարել: Աշխատել միշտ ժրատ հարուստներին կողոպտել, խեղներին, տարակոււածներին տալ. հակել անօդնական որբերին, արգելք լինել այն անգութ աւազակներին, որ անմեղ մարդկանց կողոպտում, սպանում են և այն: Այս, շատ լու-, բայց ինչով կարող եմ զղութիւն անել. ոչ ծիռնեմ, ոչ հրացան և ոչ գաշոն: Է՞ն, երբ որ Աստուած ինձ զղութիւնիցն է տուել, զրանով կը պարապէմ. ասում է ու մի փայտ

վերջնում ուսին դնում, և նանապարհ ընկնում գողութիւն անելու վերոյիշեալ ծրագրով: Քիչ որ դնում է, նանապարհին պատահում է, մի ծխաւոր գաշոյնը կապած: Հարօն յարձակում է ծխաւորի վերայ գոռալով. «Վայրի հիերծիուցդ, եթէ ո՛չ կ'սպանեմ: Խեղճ ծխաւորը գողողալով վայր է իշնում, ծին և դաշոյնը յանձնում է, Հարօն կապում է գաշոյնը նստում ծին ու գնում, բայց սրանով չը բաւականանալով ասում է չէ, սրանով զաշաղութիւն չի լինի, պէտքէ լաւ ծի և զէնքեր ճարել: Հէնց այս միջոցին մէկ էլ տեսնումէ մի լաւ նժոյզի վրայ հեծած արձաթապատ և ոսկեպատ զէնքերով զինուած մի երիտասարդ զուրս եկաւ առաջ. Հարօն գոռալով՝ սրան ևս վախացրեց իւր ահուելի ծախով. խլեց ծին ու զէնքերը և փոխարէնը տուեց իւր քոսոտ ծին և անպէտք գաշոյնը: Հարօն, զորս գու պատուիրեցեր զինուում է թանկագին զէնքերով նստում է նժոյկը, ասելով. հա, ինչ կասեմ հիմա ինձանից կարելի է վախենալ. Է՞ն, Տէր Աստուած, զու յաջողութիւն տաս, ասում է ու նանապարհը շարունակում:

Մի քանի տարի այս արհեստով շատ
բարիքներ է անում և քաջութեամ մեծ ա-
նուն ժառանգում. բացի դիւզացի և քա-
ղաքացի անտարբեր, ժլատ հարուստներից,
ամեն մարդ էլ սրան սիրում էր և յարդում.
ամեն տեղի աւազակնեն ևս գողում էին սր-
բանից, այնպէս որ, ինչ կողմն էլ նա լինում
էր, ոչ մի աւազակ չէր կարող համարձակ-
ուիլ մօաենալ այն կողմին։ Վերջապէս մի
խումբ յայանի աւազակներ վճռում են գնալ
նրա մօտ, խնդրել որ ընկերացնի իրեն հետ-
լինի գաստարաշի—խմբագետ։ Այդպէս
էլ լինում է, միայն հարօն իւր ծրագիրն յանձ-
նելլ նրանց՝ ասում է, „ծրագրիս համե-
մատ պիտի վարուէք, եթէ ոչ բոլորիդ էլ
էր կոտորեմ. աւազակները բոլորն էլ
ուրախութեամբ համաձայնուեցին և այն-
ուհետեւ շարունակում իրենց գործը։ Բաւա-
կան ժամանակ իրեն ընկերների հետ աւա-

զակութիւն է անում և մեծ քանակութ-
եամբ փող ու ապրանք ծեռք բերում։ Մի
անգամ իրենց սովորութեան համեմատ մի
մեծ վաճառականի կողոպառում են ունեցած
չունեցածը խելուց յետոյ, ուզում են իրեն
ևս սպանել։ Հարօն այս բանին հակառա-
կուում է, թուրը մերկացրած յարձակուում է
ընկերների վերայ՝ ասելով. „Ի՞նչ էք անում,
անիրաւներ, հարսաութիւնը խում էք բա-
ւական չէ, ուզում էք կեանքն էլ խել։“ Ըն-
կերները սարսափելով, զէնքերը ծեռքերից
ծղում են, ասելով. ներիր մեղ, սիսալուեցինք։”

Այս դէպքը առաջինը լինելով, ներում է
հարօն ասելով, „ գէ՞հ, վերցրէք աարէք այս
ապրանքը մեր օթեւանը, ես էլ շուտ կրգամ։“
Ընկերներին ճտնապարհ ծղելուց յետոյ, վա-
ճառառականին ևս ճանապարհի ծախս է տալիս
և գնաս բարե մաղթում։ Հենց որ ուզում է
բաժանուի նրանից, իսկոյն յետ է կանչում
վաճառականը հարօին և ասում է. „Եղբար,
երբ դու այս լաւութիւնը արիր ինձ, առա-
շին՝ իմ կեանքս բաշխեցիր ինձ և երկրորդ

նահասլարհածախսս տուիր, որպէս զի կա-
րողանամ հասնել իմ երկիրն, ուստի սրա
փոխարէն մի բան կը սովորեցնեմ քեզ:
Մէնք վաճառականներս առհասարակ սովո-
րութիւն ունենք թունաւոր հացեր պահել
հակերի մէջ, որպէս զի մեզ կողոպաղներն
և կեանքից զրկողները իւրեանք ևս զրկուին
կեանքից թունաւոր գամթէն ուտելով.ուստի
զգոշեղիր, որ չենթարկուիս այդպիսի փոր-
ձանքի. իմ բեռներիս մէջը ևս կայ այդ
թունաւոր հացերից: Հարօն շնորհակալու-
թիւն է յայտն ում և այս մարդու ազդ և
անունը և որտեղացի լինելը հարցնում, զրում
է և հեռանում: Մինչև ընկերների մօտ հաս-
նելը, մէկը արդէն կերած և մեռած է
լինում, Հարօն իսկոյն արդելում է ուտել
այդ հացը, պատմելով վաճառականի ասած-
ները: Այսպէս մի քանի տարի ևս շարու-
նակում են իրենց գործը. սակայն Հարօն
արդէն ծանծրացել էր այս տեսակ կեանք
վարելուց. մի օր ասաց իւր ընկերներին. «Ես
ուղում եմ բաժանուել ձեզանից»: Ընկեր-

ները շտատ արտամեցին և սկսեցին լաց լինել.
չէին կամենում բաժանուիլ երբէք իրենց
ազնիւ ընկերից, բայց Հարօն շատ է լի-
դրում, որ թողնեն իրեն մի քիչ հանդիսա
կեանք վորել, իսկ իրենք շարունակեն իրենց
գործը միւնոյն կերպով, եթէ իրեն սիրում
և յարգում են: Ընկերներն երգուում և խոս-
տանում են կատարել Հարօնի ցանկութիւնը
և այնուհետև սկսում են բաժանել փողը
և ապրանքը: Հարօն վերցնում է միւսոյն վեր-
ջին անգամ կողոպատուած վաճառականի
ապրանքը և ուրիշ ոչինչ. որովհետև բա-
շականին ուկի է ունենում: Ընկերները շատ
են խնդրում, աղաչում, որ վերցնէ որքան
ցանկանում է, որովհետև իրենք կարող են
գարձեալ ձեռք բերել այդ ոսկուց, բայց
Հարօն մերժում է: Այդ ապրանքը բարձելով
ծիկրի, չորիների վերայ, համբուրուելով ըն-
կերների հետ, բաժանուում է:

Հարօն դնում է ուղղակի այն վաճա-

ռականի մօտ, որին կողոպաել էին վերջին անգամ, այն նպատակով, որ վերադարձնի ապրանքը իւր տիրոջ։ Քաղաքը մանելուն պէս, հարծ ու փործ է անում այն մարդուն։ մի ձեր մարդ ցոյց է տաղիս, «աես այն կարի ժայրին նատածն է պատառոսուած շորերով։» Հարօն գնում է այն մարդու մօտ և բարեւում է. նա առնում է բարե բայց չէ ճանաչում, թէ ով է սա և հարցնում է նրա ովլ լինելը. նա պատասխանում է աթէ ես այն աւազակապեան եմ, որ քեզ այն ինչ ժամանակ կողոպաեցինք և այժմ քո ապրանքը լիովին բերել եմ քեզ յանձնելու. Եթէ քեզ հարցնող լինի, այսպէս ասա. Ես սուտ էի հնարել, թէ ինձ կողոպաել են, որովհետեւ իմ մի ընկերը իմ բացակայութեան ժամանակ ապրանքը փախցել էր՝ տարել մի ուրիշ երկիր, ես յուսահատուած առւն վերադարձաց, հաւատարով, որ նա ինձ այլ ևս բաժին չի տալ, —բայց նա, ընդ հակառակը, մեծ յաջողութեամբ վերադարձել է և իմ բաժինն

էլ բերել է։ Այս պատուերները տալուց յետով, ասում է. գէհ, գնա խանութ վարձիր, տեղաւորիր ապրանքով։ Խեղճ մարդուն մի կողմից ձերութիւնը, միւս կողմից աղքատութիւնը այնպէս կուչ էին ածել, որ ուրեն ու ձեռքը թուլացել էին, համարեա թէ տեղից շարժուելու կարողութիւն չունելը, բայց այդ բաղաւորութիւնը անելով, կարծես թէ թեեր ստացաւ, կամենում էր թռչել. իսկոյն վաղում է խանութ վարձում և ապրանքը տեղաւորում և ամեն հարց ու փործ անողին, ի հարկէ Հարոյի պատուիրած պատասխանն է տալիս այս բոլորը վերջացնելուց յետով, խորին շնորհակալութիւն է յատնում Հարօյին ասելով. «Ազնիւ բարեկամ, դու այսօր մի այնպիսի լաւութիւն արիր ինձ, որ աշխարհի երեսին շատքիչ պատահի, որ մարդ մարդու անէ. հողիս ազատեցիր պարաւակիրօշ ձեռքից, կեանքս էլ չքաւորութեան նընշումից, իսկ որդոցս թշուառութիւնից, որոնց վատ ապազայ էր սպասում, գու այս

գրութեան մէջ հասար մուրազատուը ո.
Ասրզսի նման և աղատեցիր ընտանիքիս
պատիւր. Այլ ևս ոչինչ չունեմ ասելու և
ոչ էլ կարող եմ լաւութիւնդ վճարել,
միայն թող Աստուած ինքը տեսնէ այս քո
արած բարերարութիւնդ և մէկի փոխարէնը
հազարապատիկը տայ: Հարօն շնորհակալու-
թիւն տնելով և յաջողութիւն մաղթելով,
համբուրւում և բաժանւում է այն մար-
դուց:

Դ.

Դորանից յետոյ նա ճանապարհ է
ընկնում մի անձանօթ երկիր, որպէս զի
ճանաչող չը լինի: Ճանապարհին սկսում է
խօսել ինքն իրեն, «Փառք քո ողորմու-
թեան, Աստուած, որ ինձ պէս չնչին ստոր
արարածին այնքան բաներ անել տուիր, որ
ամբողջ աշխարհը սարսափում էր ինձանից և
ոչ մի փորձանքի չ'ենթարկուեցի այսքան
ժամանակամիջոցում, բայց ես ևս պակաս
ծառայութիւն չարի քեզ քո կամքի համե-
մատ փարուելով. իմ մարդկութեան պար-

տաւորութիւնը կատարելով և քո առաջ
պարզերես գուրս գալով, սակայն կը ին-
գրեմ պարձանք չը համարես այս խօսքեղբ
ի՞նչ իրաւունք ունեմ պարձենալու, քանի
որ այն բոլորը գու էիր տալիս ինձ, որ ես
էլ ինձ կերակրելուց յետով-ուրիշն էլ էի
կերակրում, գու էիր ինձ օգնում, ոյժ և
կարողութիւն տալիս, որ ես էլ ուրիշն
էի օգնում. միայն կան մարդիկ, որ միւ-
նչն կերպով, եղանակով հարստութիւն
են զիզում և իրենց պարտաւորութիւնը
մոռանում, կարծելով թէ իրենց խելքով
և հնարքով են ծեռք բերել, այլ ևս քեզ
չեն յիշում, իրենց զիլից աւել ոչ ոքի չեն
աեսնում աշխարհում. ես նրանց համար
եմ խօսում: Ահա ևս այս օրուանից վերջ
եմ տալիս եմ աւազակային կեանք փարելուն,
ներողութիւն խնդրելով քեզանի::: Խօսքը
վերջացնելուց յետոյ, մի քիչ ևս ծիուն
զօռ է տալիս, հասնում է մի քաղաք, ծիուն և
աւելորդ գէնքերը ծախում է և գնում է իրեն
համար հիւրանոցում մի սենեակ վարձում և

այնտեղ ապրում: Այդ տեղ ևս մի խեղճ
մարդ գնում գալիս է լինում, անունը Մելքոն
Աղա. Հարօն սրա անունը իւր գրութեան
հետ համեմատելով, զարմանալով հարցնում
է նրա ժամանակներից, այդ խեղճ մարդուն
ինչու էք աղա կանչում, ժաղբում էք թէ
ինչ: Ոչ, եղբայր, ամօթ չէ, ինչի պիտի
ժաղբենք. այդ մարդը մի ժամանակ իրա-
ւունք է ունեցել այդ անունը կրելու, բայց
յետոյ, բախտը խռովելով, ահազին հա-
րստութիւնը ծեռքից գնում է, այս օրն է
լնինում. հիմա էլի աղա ենք կանչում,
թէպէտ աղքատ է: Ընտանիք չունի, ոչինչ
էլ չունի, մօտիկ ազգականներից ևս զուրկ է:
Հարօն երբ լսում է, վնասում է որ առանց
նրան ոչ հաց ուտէ և ոչ էլ թէլ խմէ,
այնպէս է պաշտպանում այն մարդուն,
ինչպէս իր հօրը: Մի առ ժամանակ այդ
տեղ մնալուց յետոյ, մտադրում է մի
ուրիշ քաղաք գնալ: Մի գիշեր, երբ ըն-
թրիքը վերջացնում են, աղէն գիշեր
բարի է ասում ու գնում: Հարօն յե-

տեսում է նրան կամաց կամաց, որպէս զի
տեսնէ նրա օթեանը. տեսաւ որ գնաց մի
բրի մօա կանգնեց. գա խողի բնի պէս մի
բան էր. այդ էր Մելքոն աղի խրճիթը.
դռան փոխարէն մի տախտակ էր գէմ զր-
ցած: Վերցրեց և ներս մտաւ Մելքոն Աղէն.
Հարօն դրսից զիտում էր նրա արարողու-
թիւնը: Մելքոն աղէն առաստաղից կախած
մի զամբիւղ իշեցրեց, միշից հանեց մի
կտոր չոր հաց և մի կտոր ևս չոր պանիր, ով
զիտէ, որ ժամանակումնից մնացած: Հաց
ու պանիրը ծեռքին շուռ ումուռ էր տա-
լիս, էլի դնում է զամբիւղի մէջ ասելով.
«առ այժմ թող մնայ, ով զիտէ, հարկա-
ւոր կդայ, միշտ խօ աղնիւ Հարօն այնտեղ
չիլինի. քաշէ անում նորից և երկու պա-
տառուած փալասներից մէկը տակը ծր-
գում ու միւսը վերան ու պառկում քնե-
լու: Հարօն այս տեսնելով, վիրաւորուած
սրտով վերադառնում է իւր օթեանը.
այդ գիշեր անհանդիսա լինելով, քունը չէ
տանում. առաւօտեան շատ երկար մտա-

ծեղուց յետով, ասում է. «Տէր Աստուած, թէ-
պէտ ես քեզ խոստովանուեցի որ այլ ևս
զողութիւն չանեմ, բայց այժմ ինձ ստի-
պում է Մելքոն աղան մի անդամ ևս
անել: Քեզ յայսնի է, որ ես սրտանց
հրաժարուել եմ այդ բանից. Եթէ քեզ
հանց չէր ինձ զողութիւն անել, թող չը
պատահեցնէիր այս մարդուն, թող ցոյց չը
տայիր այն զարհուրելի պատկերը. վերջա-
պէս՝ որ զիանամ ինձ պիտի պատմես,
զարծեալ մի անդամ ևս պիտի զողութիւն
անեմ Մելքոն աղի համար, ասում է և
զնում է դէպի փողոց: Հարօն փողոցում
հարց ու փորձ է անում, թէ այս քաղաքում
ո՞վ է հարուստ ու ժլատ, ի հարկէ այդ-
պիսի մարդուն ամենքն էլ կ'ճանաչէին:
Ասում են. թէ այս ինչ հրէան և այս ինչ
աեղ է նրա տունը: Հարօն սպասում է
մինչեւ երեկոյ, երբ տուն է զնում հրէան,
Հարօն գաղտնի հետեւում է հրէային,
հրէան տուն մտնելուն պէս՝ հարցնում է
կնօշից «Այս զիշեր ինչ ունենք ուտելու»:

Կինը պատասխանում է. «Պանիր, խորո-
ված, առմա և այն»: Մարդը բարկանալով
ասում է. «Ինչու վլաւ չես եփել, անի-
ծած» և մի լու ծեծում է կնոջը: Հարօն
այս բոլորը աեսնելով, ասում է. «Վասոքեզ
Աստուած, Մելքոն աղէն չոր հայի ու պա-
նրի կառատանքը որքան ժամանակ պահել
է, որ գուցէ ոչ ոք հայ տւող չը լինի,
այն ժամանակ զայ ուտէ, իսկ այս հրէա-
նի կինը երեք աեսակ լաւ մննեարար կե-
րակուր համրում ու զարսում է մարդու
առաջ, բայց մարդը այդ կերակուրներով
դո՞ւ չը լինելով, փայտով ծեծում է կնօշը
թէ ի՞նչու վլաւ չես եփել. հիմա սրա կինն
ու փողը միթէ Մելքոն աղային չեն ար-
ժանիս»: Հարօն այնքան սպասում է որ
սրանք առանձին-առանձին հաց են ու-
տում և համզաստանում: Ի հարկէ, զողու-
թիւնը Հարովի համար խաղ ու պար էր.
այնպիսի մի հնաբքով ներս է մանում,
որ ստուանէն ինքը չէր կարող նկատել. որ-
տեղ փողի մեծ զումարն է լինում, զնում
է այնաեղ մի կաշու տոպրակ լիքը ոսկու
վերցնում է մի թեփ տակն է գնում, իսկ

3827-82
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԴԱՎԻԴ Ա. ԽՈՎԱԿԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

կնօշը իւր անկողնով միւս թեփ տասկն է առնում, ու որաեղ ես հարօ, Մելքոն աղայի տանը. կնօշը կամաց վայրէ գնում յատակի վրաց. կարծես կախարդուած լինի, ախր հարօն կատարեալ կախարդ էր գողութեան մէջ, որովհետեւ իւր բազգն էր այդ: Կինը քաղցր քնով քնած, Մելքոն աղային ևս զլորում ծգում կնօշ անկողնու մէջ և ծուծկում է երկուսին միասին. ոսկով լիքը տոպրակը ևս գնում է զիլսների աալին և ինքը գալիս է իւր կացարանը: Նկատուած է որ առ ժամանակ մասածողութիւնը մարդուն հանգստութիւն չի տայ թէ տխուր տրամադրութեան ժամանակ և թէ ուրախ. մեր հարօյին առաջի զիշերը տիրութիւնն էր անհանդիստ արել, իսկ այս զիշեր ուրախութիւնը. այո, նա այս զիշեր շատ ուրախ էր, որ մի բարի գործ ևս կատարել էր. իսկ այդ ուրախութեան մասածողութիւնը հետևալն էր. Մելքոն աղան, որ միշտ գալիս էր արխուր, արտում, ծեռքերը ծոցը և հազիւ լսելի ծայնով բարի լոյս էր ասում, այժմ հետաքրքիր էր աեսնել, թէ վաղը տուաւեան ինչպէս կրդալինդավինքն ի-

րեն խօսում էր և սպասում անդադար լոյսը բացուելուն, որ Մելքոն աղան զնոպ հիւրանոց, աեսնի իրեն:

Ե

Տրէան լոյսը բացուելուն պէս իւր սովորութեան համեմատ առաջ մէկ նայում է իւր ոսկով լիքը տոպրակը և երբ տեսնում է չ'կայ, երկու ծեռքով զիսին խփում է ու գոռում. իսկոյն ծառաները ներս են մտնում և հարցնում «Ի՞նչ է պատահել», աէրը պատասխանում է. Էլ ինչ պիտի պատահէ, տունս քանդուել է, ո՞ւր է ոսկով լիքը տոպրակը, ասացէք շուտ, ո՞ւր է, ո՞վ է տարել:» Ծառաները զարմանալով պատասխանում են. աիսր մենք ամբողջ զիշերը չենք քնում, եթէ քնում էլ ենք, այն էլ հերթով, այս զիշեր մարդու ստուեր անգամ չենք տեսել, ի՞նչ թէ գողւթա ինչ եղաւ, հրեշտակները խօ երկինք չտարան: Կինս ուր է այն անիմամբ, նրան հարցիքը, գուցէ զիտէնալ: Տեսնում են կինն էլ չը կայ, իրեն անկողնով: Անպատճառ այն անիմամն է

տարել իրեն հօրանց տունը, որովհիւտե
երեխյեան ես նորան ծեծեցի: Գնացէք,
շուտով տեսէք:» Ծառ աները դնում են,
բայց ոչ հօրանց տանն են գտնում, ոչ
բարեկամների: Այն ինչ նրա կինը առա-
ւոտը երբ արթնանում է, տեսնում է
իրան մէկ խողի բնի մէջ և կշտին մի պա-
տառուուսմծ շորերով մարդ պառեած իր
անկողնում. ոսկով լիքը առպրակն էլ աես-
նում է զլիի տակը զրած, ծիծաղերով ա-
սում է ինքն իրեն. «այս ինչ հրաշք է, չեմ
իմանում, կարելիէ Աստուած իմ ծայնը լսեց,
որ միշտ ասում էի, թէ, Աստուած, երանի
մի պարագանի կին լինէի, հանգիստ ապրէի»...
Դեռ խօսքը չմեջացրամ հազում է ասս-
տիկ և հազի ծայնից արթնանում է ա-
ղան. տեսնում է կշտին մի գեղեցիկ կին
նստած թանկագին անկողնու մը, հարց-
նում է առղամ, ո՞վ ես դու. կինը պա-
տասխանում է «Ես մի գեղեցիկ կին, այս
էլ հրաշալի անկողին, այն էլ անհատնելի
ոսկի, ցոյց տաղով առպրակը. էլ ինչ ես
հարցնում, երբ Աստուած այս բոլորը առել է

քեզ: Ազան այս լոկով և ոսկին աեսներով,
հասաւատ աղազի կերպարանք է ստանում,
շուտով վեր է կենում, հազնւում, մի քա-
նի ոսկի գրպանն է ածում և շատապում է
զէպի հիւրանոց, որպէս զի այն մարդուն
պատուէ, որից այնքան ժամանակ պատիւ
էր ստացել: Հարօն էլ գրան էր սպասում:
Մէկ էլ-տեսաւ Մելքոն աղան եկաւ, ու-
րախ ուրայի և հասաւատ քայլերով ներս
մտաւ, բարձր ծայնով բարիլոյս ասաւ և
ձեռքը սեղմեց. յետոյ հիւրասիրեց Հարօլին
թանկագին կերտկուրներով և խօնչքներով:
Հարօն մտքի մէջ խնդարով, ասում էր. «Ի
անիմուես դու, զրած, անիմուես, որ մար-
դու մեռցնողն էլ ես դու, կենդանացնո-
ղին էլ:» Հրէան ամրողչ քաղաքը տակն
ու վրայ է անում, մօափկ զիւղերում, զիւ-
ղաքաղաքներում, կնօշ բարեկամների մօտ
մարզիկ ուղարկում, որոնում, բայց ոչ մի
տեղ չեն գտնում. վերշապէս դնում է թա-
գաւորի մօտ, գանդասաւում է, թէ ան-
ցեալ զիշեր իմ աանից 120,000 ոսկի և
կինս իւր անկողնով անդաբացել է: Թա-

դաւորն այս լսելով, զարձանում է. իսկոյն
լրտեսներ է ցըւում ամեն կողմ և մեծ
պարզեներ է խոստանում, եթէ զանեն
նրան, բայց գարձեալ 'ի զուր:

Զ

Թագաւորը երկար մտածելուց լեռոյ
հրաման է արձակում, որ եթէ այդ բանը
կամ կինը և կամ ծառաները չեն արել,
այլ մի ուրիշ մարդ գողութիւնով մտել,
անից գուրս է տարել կնօշը և ոսկին, թող
դայ ինձ մօտ և յայտնէ. ևս բացի իմ թա-
գաւորութիւնիցս, ի՞նչ որ կուզի կոսամ:
Իսկոյն այս հրամանը տարածում է ամբողջ
քաղաքում: Հարօն լսելով այս, տառմ է.
Էհ, ինչ կը լինի, թող լինի, կը ներկայանամ
թագաւորին և կը յայտնեմ բոլոր եղելու-
թիւնը. երբ որ ինձ յաջողւում է ամեն
բան գողութիւնով, լոյս ունեմ որ թա-
գաւորի մօտ ևս կը յաջողուի. իսկոյն վեր
է կենում և իսկոյն գնում թագաւորի մօտ
և հրապարակի մէջ յայտնում, թէ ևս եմ
այն գողը:

Թագաւորը պահանջում է պատմել հաս-
տառ եղե ութիւնը: Հարօն սկսում է իւր
պատմութիւնը, իւր զյափի անցքը, սկզբի
լորի տանելուց մինչև հրէացի կնոշն ու ոս-
կին գողանալը: Թագաւորը բերել է տապի
հրէալին, նրա կնոշը և Մելքոն աղապին.
հարցնում է կնոշը: «թէ ինչպէս իրեն ան-
կողնով վերցրել, ապրել է, որ ինքը չէ իմա-
ցել»: Կինը երգւում է, որ մինչև լոյսի
բացուելը ոչինչ չէ իմացել. առաւօտեան
յանկարծ աչքը բաց է արել և տեսել իրեն
Մելքոն արդարի խրճիթի մէջ: Թագաւորը
հարցնում է. «այժմ կը ցանկանամ կրկն
վերապառնալ ամուսնուդ մօտ թէ ոչ».
կինը մերժում է ասելով՝ բաւական չէ քսան
տարի շարունակ գտնիքի մէջ մնալս, որ
կրկն անդամ մտնեմ այդ տանշարանը. ի՞նչ
յանցանք ունեմ ես, իմ խնդիրս միշտ այն
կը Աստուծուց, որ մի կերպ ազատէր
այդ գաղանի մօտից, այն ահազին հարս-
առութիւնը այնպիսի զգուելի միջոցներով է
դ'զել, որ գորան պատառ-պատառ անել
անզամ մեղք է, ես հաց խօ չէի ուտում

զբա տանը, արիւն էի ուառում, արիւն»։
 Թագաւորը այս բոլորը լելուց յետոյ,
 հրէափի ամբողջ կարողութիւնը հասաւատում
 է ինօշ և Մելքոն աղալի վրայ և հրամա-
 լում է, որ գնան վայելեն այդ հարսառու-
 թիւնը Զ նոր ամօւմինները միասին, իսկ
 հրէային պատժում, յետոյ դառնալով դէպի
 չարօն հարցնում է։ «Սլրելի որդիս, հիմա,
 դու ասա, տեսնեմ, ի՞նչ ես ուզում, որ
 տամ քեզ։ Ես իմ խոսառումս պէտք է կա-
 տարեմ»։ Հարօն խոնարհապար պատամսա-
 նում է։ «Թագաւորը ողջ լինի. Ես ի՞նչ
 պէտք է ուզեմ, իմ զիսի անցքը պատմե-
 լով, կարծեմ արդէն յախնի եղաւ Ձերդ
 մեծութեանը՝ թէ ինչ եմ ուզեցել, կամ
 այժմ ինչ եմ ուզում»։ Թագաւորը ասում
 է։ «Ուրեմն ալարուանից իմ հարազատ որ-
 դին ես և իմ դանձարանիս դրույ բաց կը
 լինի քեզ համար, ինչպէս կամենում ես այն-
 պէս գործադրիր»։

ՏԱՐՈՒԻՆԱԿ ԱՂՔԱԾ

(Հին զրոյց)

Հին ժամանակը լինում է մի շատ ժամա-

և աղան մարդ, ահազին հարսառութեան և
 կայքի, կալուածների տէր։ Ունենում է ե-
 րեք զաւակ՝ երկուսը աղայ, մէկը աղջիկ։
 Զնայելով, որ ինքը առաջ շատ ողորմելի
 զրութեան մէջ է լինում, այնու ամենայ-
 նիւ անխղճարար է վարում իր խեղճ գրա-
 ցիների հեաւ։ Կինը միշտ նախառում էր,
 ասելով—այ մարդ. ախր չէ որ առաջ մենք
 էլ խեղճ էինք, օգնութիւն էինք խնդրում
 ուրիշներից և օգնում էին մեզ, այժմ փառք
 Աստծու, ունենք մեծ կարողութիւն. լիշիք
 մեր անցած օրերը և դու էլ օգնիք խեղ-
 ճներին»։ Բայց այդ խօսքերը նրա մի ական-
 չից ներս էին մանում, միւսով դուրս զա-
 լիս։

Մի օր նա իր սովորութեան համեմատ՝
 ընտանիքով կառք նստամ զնում էր այ-
 դին։ Ճանապարհին պատահում էր երկու-
 աչքով կոյր մի աղքատի, որը ձեռները
 պարզելով դէպի կառքը, ողորմութիւն է
 ուզում մեր պարոնից։

Ժլատը իսկոյն ձեռքը զբանն է տա-
 նում, որպէսզի ողորմութիւն տայ աղքա-

աին, բայց մեծ որդին հօր ձեռքը բռնում
է ասելով՝ «մի տար, հայրիկ չան, մի
տար»:

Հայրը ապշած հարցնում է «ինչո՞ւ, զա-
ւակս, ինչո՞ւ»:

—Գիտե՞ս ինչ սովորութիւն ունի այդ
աղքատը, հայրիկ:

—Ի՞նչ, որդի:

—Ես շատ անգամ տեսել եմ, որ եթէ
անցորդը, փոխանակ դրամ ողորմութիւն
տալու, երեսին թքել է, դա զլուխը խոնար-
հելով, շնորհակալութիւն է յախնել և օրհ-
նել է նրան: Բայց եթէ ողորմութիւն է
տուել՝ դա ինքն է նրա երեսին թքել և ա-
նիմել:

Հայրը թէեւ չի տալիս աղքատին ողոր-
մութիւն, բայց չի կլ հաւատում որդու
պատմածին: Նա հեռանում է աղքտից և
մի ուրիշ տեղ կանգնում:

Դեռ տասը ըոսէ չանցած, կասարւում
են իր որդու պատմածները իր աչքի առաջ:
Պարոնն այլ ես չի շարունակում իր ճա-
նապարհը, կառըր յետ գարծներով՝ դալիս է

ուղղակի առւն: Այո՛ գալիս է, բայց ոչ զի.
շերը քուն է ունենում, ոչ ցերեկը հանգստու-
թիւն: մտատահջութեան մէջ է ընկնում:

Կոյր աղքատը ողորմութիւն է խրն-
դրում: Թէ տալիս են՝ երեսին թքում է
անիմում, թէ չեն տալիս, երեսին թքում են,
նա ուրախութեամբ շնորհակալութիւն է
յախնում և օրհնում: Այս ինչ գաղտնիք է,
ասում էր պարոնը ինքն իրեն: Նատ հե-
տաքրքիր է լինում նրա համար իմանալ այդ
տարօրինակ սովորութիւնը: Վերջապէս վճ-
ռում է, որ աղքատին բերել տայ իրան
տուն և հարցնի գաղտնիքը: Նա այդպէս
էլ արաւ. նախ և առաջ աղքատին ուղար-
կեց բաղնիք, նոր շորեր հաղցրեց, նորոգեց
ոտից մինչեւ զլուխ. լաւ ճաշ ուտացրեց:

Աղքատը խորին շնորհակալութիւն ա-
նելով ուզում էր զուրս զալ, տան տէրը
բռնեց նրա ծեռից, տսելով՝ բան ունիմ ծեղ
սաելիք:

—Հրամայիր, հրամայիր, ողորմած պարոն:

—Խնդրեմ ասացէք, այդ ի՞նչ սովորու-
թիւն է, որ զուք ունիք. Եթէ ծեղ ողորմութիւն

Են աւալիս, երեսներին թքում էք և անփ-
ծում իսկ եթէ երեսիդ թքում են, նրանց
շնորհակալութիւն էք յապտնում և օրհնում:

—Դու շատ բարի մարդ ես երեսում, ուս-
տի նիշար կրպատմէմ: - Ուրեմն լմիր. Զատիկ
շարաթ երեկոյ էք, պատարագից յետոյ
ամեն մարդ, աղքատ թէ հարուստ՝ շտա-
պում էք դէպի իր տունը գնալ և պատր բաց
անել: Միայնակ ես էի, որ գնում էի գե-
րեզմանատուն, որովհետև մեր տանը պատր
բաց անելու ոչինչ չունէինք. ոչ թէ պատր
բաց անելու ոչինչ չունէինք, այլ ցամաք
հաց էլ Աստուած պէտքէ տար: Ես այն
նպատակով հեռացայ քաղաքից և գնացի
գերեզմանատուն, որ ոչ ոք չտեսնէր ինձ.
այնաեղ այնքան մնացի, մինչև երեխայքս
անօթի, քաղցած, երկար սպասելուց յետոյ
յոդնէին և քնէին, որ յետոյ վերապառնացի
տուն, որպէսզի ինձ չտեսնէին, և չաղաղա-
կին «հայրիկ, հաց, կարմիր ձու»: Դեռ
մութը չեր պատել, երբ մի մարդ գերեզ-
մանատան մօտիցն անցնում էք. ինձ տես-
նելուն պէս մօտեցաւ և բարեկուց յետոյ
հարցըրեց:

—Այ մարդ, այս ահեղ զիշերը այդաեղ
ինչ ես շինում:

Ես պատմեցի. նա առանց մաամելու
հանելով զրպանից երեք ռուբլի փող և մի
փոքր արձաթէ թաս, տուեցինձ ու ասաց.

—Այդ փողով գնա՛, ինչ որ ուղում ես
առ և տար երեխանցդ համար, իսկ այս
թասը զիշերը գիր զլիսիդ տակը, առաւօտք
կրտեսնեա, որ մէջն էլի երեք ռուբլի կայ.
միշտ ազդպէս կրշարունակուի անվերջ և դու
կարող ես զրանով կառավարուել: Ես խո-
րին շնորհակալութիւն յայտնեցի, իսկոյն
վագեցի դէպի փողոց, ամեն բան գնեցի,
ինչ որ հարկաւորէր այն զիշերը պատր
բաց անելու համար և շուառվ զնացի տուն:
Բարեբախտաբար երեխայքս գեռ չէին քր-
նել, սպասում էին ինձ, որ կերակուր տանէի
նրանց համար: Էլ ինչ սաեմ Աստուած.
ամենայն տարակուսածի զլիսից անպակաս
անէ այն ուրախութիւնը, ինչպէս որ նր-
րանք ուրախացան ինձ տեսնելով՝ առաս պա-
շարը ձեռքիս նրանց մօտ կանդնած: Այն
զիշերը լաւ ուրախութիւն արինք: Առա-

ւոտր վեր կացայ տեսայ նորից երեք բուր-
լին թասի մէջն է, միւս առաւար նոյնպէս
և այսպէս շարունակաբար: Մէկ օր էլ վեր
առայ թասը և նայեցի նրա չորս կողմր.
տեսայ քամակին մէկ խաչքարչած, մէկն էլ ես
քաշեցի նրա կողբին: Միւս առաւար աեսայ
վեց ոռուբլի կայ թասի մէջ: Մէկ խաչ ևս քա-
շեցի նրանց կողբին, առաւար տեսայ իննը
բուրլի թասի մէջ: Մէկն էլ աւելացրի, վեր-
ջապէս այնպէս արի, որ թասի ետեր այլ
ևս տեղ չմնաց, խաչ քաշելու: Օրական հա-
րեւր բուրլուց աւելի էի ստանում:

Բաւականին հարստութիւն զիղեցի: Բա-
ւական ժամանակից յետոյ, մի օր ինձ պա-
տահեց այն թաս առւող մարդը և բարեւց
ինձ: Ես չեմ կամենում ճանաչել նրան, բայց
ակամայ բարեն առայ: Նու մի խորը հա-
յեացք ծգելով վրէ՝ ասացի:

— Ձևս ճանաչում ինձ:

Ես ճարահատեալ բայցականչեցի՝ ախ,
դո՞ւք էք, ինչպէս չճանաչեցի իմ բարերա-
րիս: Նու առանց երկար խօսելու, հարցրեց
թէ, թասը մօտղ է: Ես պատասխանեցի,

այո՛ մօտս է:— Տո՞ւք տեսնեմ, ասացնա հան-
դարս կերպով: Ես խսկոյն հանեցի և տուի
իրան: Նու նայեց թասի ետեր և ցոյց տա-
լով ինձ ասաց:— Այս ի՞նչ ես արել: Իհար-
էէ, ես ուրիշ ինչ կարող էի անել, եթէ ոչ
լոել և զլուխս ծռելով մեղաւոր ծևացնե-
լով ինձ նրա առաջ, քանի որ պատասխան
չունէի ապառու:

Նա երեսիս երկար խէժ նայելուց յետոյ
աւելացրեց:— «Որո՞ինետև դու չբաւակա-
նացար օրական այն երեք բուրլիով, ուզե-
ցար, որ շատ մեծ հարստութիւն ունենաս,
որպէսզի քեզանից էլ հարուստ մարդ չի-
նի, և չեմ լիշումքո առաջւայ դրութիւնը,
չեմ էլ ուզում նայել խեղների վրայ, մին-
չե անգամ ինձ էլ չեմ ուզում ճանաչել,
ուստի գնա՛ դարձեալ այն կեանքը վարիր,
ինչ կեանք որ վարում էիր առաջ»: ասաց
և յանկարծ անկալացաւ: Շատ երկար
կանգնելուց, մտածելուց յետոյ վերադարձալ
առւն, տեսայ որ մեր առաջուայ հին քան-
դուած խրնիթումը նստած կինս դուլպայ է
դործում, երեխայքս էլ նոյն լրութեան մէջ,

ինչպէս որ առաջ: Ես այլևս չկարողացայ համբերել և տանել այդ բխալմունքը, հենց այն բոպէին կնոշս ծեռքիցը դուլպայ դորձելու միլերը խլեցի, մէկը մի աչքս խրեցի, միւսը-միւս աչքս: Կինս դիխին խփելով դոռում էր այս խօսքերով. առ, տուն քանդւած, այդ ինչ արիր, շտար լաւ օրումն էինք որ դու էլ քեզ կուրացրիր, էլ ո՞վ պէտքէ մեր երեխանցը տէրութիւն անէ, ջուրը թշփուելու գառանք: Ես պատախանեցի կնոշս, որ այս աչքերը արժանի են կուրանալու, քանի որ նրանք չկշտացան:

— Հա՛ իմ գաղտնիքը, պարոն: Ես ինքս ինձ այդպէս դատապարտել եմ, և ես արժանի չեմ ողորմութեան, որովհետեւ իմաչքածակութեան պատճառով այս օրն ընկայ...

Հարուսաւ պարոնը լսելով այդ պատմութիւնը, իր կեանքի եղանակը դրանից յետոյ փոխեց, դարձաւ ողորմած մարդ:

Աշըղ-Ճաղիրի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ՂԱՐԴԱՇԵԱՆ

36791